ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

ՊՐ. ՓԻԼԻՊՊՈՍ Վ.ԱՐԴԱԶԱՐԵԱՆՑ.—Մենք արդէն դիմել ենք ուր հարկն է թոյլտուութեան խնդիրքով՝ որ պ. Վարդազարեանցը հաստատուի «Մուրճ» ամսագրի հրատարակչի կոչումով։

«ՄՇԱԿ» ԼՐԱԳՐԻ խմբագիր պ. Գրիգոր Արծրունին անպատճառ ուզում է, որ մենք իմանանք թէ ռուսերէն, գերմաներէն, ֆրանսերէն լեզուներում կայ քաղաքացիական պսակ խօսքը։ Նա հարց է տալիս՝ «Միթէ պ. Արասխանեանցը այդ չը գիտէ»։—

Մեր ընթերցողներին «Մուրճ»-ի № 7—8-ի քրոնիկից արդէն յայտնի է, որ եկեղեցում կատարւող ամուսնութեան հանդիսակատարութեան մէջ մենք որոշում ենք ամուսնական դաշնը՝ պսակի արարողութիւնից։ Մեր ընթերցողներին յայտնի է նաև ամուսնական դաշնը եկեղեցուց դուրս կատարելու կարելիութիւնը՝ օրէնքով սահմանուած եղանակով, ինչպէս այդ կայ Գերմանիայում, Ֆրանսիայում և այլն, որը և անուանւում է քաղաքացիական ամուսնութիւն։ Այդ քաղաքացիական ամուսնութիւնը, ասում էինք մենք, նոյնքան յարգելի է, որքան և եկեղեցական ամուսնութիւնը։ Բայց այդ դեռ չի խանգարում մեզ պնդել, որ եկեղեցական կամ կրօնական ամուսնութիւնը պսակի արարողութիւնով է կատարւում, իսկ քաղաքացիական ամուսնութիւնը պսակի արարողութիւնով չէ կատարւում։ Պսակը զուտ եկեղեցական գաղափար է, որովհետև նա ոչ այլ ինչ է, եթէ ոչ օրհնաբանութիւնը ամուսնութեան յանուն Աստուծոյ և կրօնի էլէմէնտները կազմող այլ սրբութիւններ։

Ահա ինչու սլեւական օրէնքները այն բոլոր երկիրներում, ուր ընդունուած է քաղաքացիական ամուսնութիւնը, չեն փոխ առել պսակի արարողութիւնները, որ միայն եկեղեցուն է վերապահուած։ Ահա ինչու կայ քաղաքացիական ամուսնութիւն խօսքը, բայց չը կայ քաղաքացիական պսակ տերմինը. ահա ինչու կարելի է ասել mariage civile ֆրանսերէն, bürgerliche Ehe գերմաներէն, гражданскій бракъ

ուսերէն, բայց դեռ ոչ ոք չի մտածել ասել՝ bénédiction nuptiale civile ֆրանսերէն, bürgerliche Trauung գերմաներէն, гражданское вѣнчаніе ռուսերէն։ Այդպիսի խօսքեր չը կան։

Եթէ պսակել և ամուսնանալ մեզանում, ժողովրդի բերանում, նոյն միտքն է լալանում, եթէ պսակ և ամուսնութիւն ժողովրդի բերանում նոյն նշանակութիւնը ունին, դա շատ և շատ հասկանալի է, քանի որ պսակ և ամուսնութիւն անբաժան կերպով է կատարւել, և պսակւած մարդը անպատճառ նաև ամուսնացած է։ Բայց եթէ ժողովրդի հասկացողութիւններից և նորա բառարանից միայն օգուտ քաղելու լինինք, մենք պէտք է նոյնացնէինք ոչ միայն ամուսնութիւն և պսակ գաղափարները, այլ և հարսանիքի գաղափարը, քանի որ փոխանակ ասելու՝ պսակւել է, ամուսնացել է, ժողովուրդը շատ լաւախս ասում է՝ այս ինչը հարսանիք է արել։ Եւ բնական է՝ հարսանիք անում է միայն ամուսնացածը. բայց այդ դեռ իրաւունք չի տալիս մեզ հարսանիքը (ամուսնութեան առիթով կատարւող ճաշկերոյթը, ուրախութիւնը, խաղացող պարները և այլն) նոյնացնել ամուսնութեան հետ, որպէս չը պէտք է ամուսնութիւնը նոյնացնել պսակի հետ։ Կարելի է ամուսնանալ նաև առանց պսակի և կարելի է ամուսնանալ և պսակւել առանց հարսանիքի։

ԲԱՂԱԲԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆԸ. Ժամանակի սղութեան պատճառով, լեռնաձգեցինք։ Բայց և այնպէս հարկ ենք համարում հաղորդել՝ գենեբալ Բուլանժէի և իրլանդական կուսակցութեան պարագլուխ Պարնէլլի մահուան լուրը։

Խմբագիր-Հրատարակիչ՝ ԱԼԵՔՍԻՈՒ ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ։